Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.02.2018թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Կ. Մկրտչյան – ՀՀ ՖՆ էլեկտրոնային գնումների սպասարկման և համակարգման բաժնի տեղեկատվական շտեմարանների ադմինիստրատոր

Անդամներ

Ա. Մարտիրոսյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի պետ

Մ. Ղազարյան – ՀՀ ՖՆ էլեկտրոնային գնումների սպասարկման և համակարգման բաժնի տեղեկատվական համակարգերի պատասխանատու

Փ. Քալաջյան - ՏՏԵՆԶՎ տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու

Վ. Մուրադյան – ՏՏԵՆԶՎ վարչության գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան՝ ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Պրիիզմա» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00172876, հասցե՝ ք. Երևան, Հ. Հակոբյան 3, էլ հասցե՝ h.harutyunov@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն,որ

1. «Պրիիզմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ում նշված չէ ընկերության ՀՎՀՀ-ն:

2. Հավելված 2.1-ում որպես մասնակցի իրական շահառու նշված է ընկերության տնօրենի տվյալները,այնինչ վերջինս չի համապատասխանում տնօրենի էլեկտրոնային ստորագրության տվյալների հետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գինը ներկայացվում է ստորև՝

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)		
		«Պրիիզմա» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	Հավաստագիր	95 000		95 000

Հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել «Պրիիզմա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված հավելված 1-ի և 2.1-ի ճշգրտված տարբերակները:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել վերոնշյալ փաստաթղթերի ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Կ. Մկրտչյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Մ. Ղազարյան

_____ Փ. Քալաջյան

_____ Վ. Մուրադյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան